

ԼԻԲԱՆԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԵՌՈՐԵԱՅ ԱՆԿԱԽ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

لبنان - جريدة ارمنية
LIPANAN
JOURNAL ARMÉNIEN
BI HEBDOMADAIRE
ՀԱՅՏԻ
RUE MAARAD BEYROUTH
(R. Libanaise)
Directeur-Propriétaire J. ADJEMIAN

ԳՆԵՑԷՔ ՄԻԱՆ
ՀԵԼԵՊԻ ԵՂԻՄ
Մենդեղյանի եւ մազարոնի գործարարական
արտադրութիւնները
Բ Ա Շ Ն Ե Դ Ի Ն
Տարեկան Վեցամսեայ
Սուրիա 350 ս. դ. Սուրիա 200 ս. դ.
Արտամ. 100 ֆր. Արտամ. 70 ֆր.
Զեռագիրները եւ չեմ վերադարձուիլ

ԱԶԱՏ ԲԵՄ

1915 ԱՊՐԻԼ 24ԻՆ ԴԵՊԻ ՆՈՐ ԱՊՐԻԼ 24ԵՐ

Մենք թրքահայ ապրող սերունդս չենք մոռնար այն թուականը, որուն կապուած է մեր հօր, մեր մօր, մեր եղբոր, մեր քրոջ եւ կամ մեր մէկ սիրելիին կորուստը: Թուական մը որ մեզի որպէս արդիւնք տուաւ տասնեակ հազարաւոր անպաշտպան որբնու բանակ մը:

Կարգ մը մարդիկ այս յարմար առիթը չեն փախցնէր հրապարակային սգահանդէսներ սարքելով իրենց կուսակցական քրօնականութիւնը, ինչպէս նաեւ հակա-թուրք կրքերը հրապարակաւ համար: Այս հրապարակային ցոյցերը չեն որ պիտի ապացուցանեն թէ մենք Ապրիլ 24ի վերապրողներս գիտենք վայրագութեանց դէմ բողոքել, գիտենք կուրծք տալ պատրաստուած նոր Ապրիլ 24երուն եւ գիտենք մեր կորստեան եղբայրներուն վրէժը լուծել:

Այս կարճ ծանօթութիւնը տալէ վերջ անցնելը մեր նիւթին:

Համաշխարհային պատերազմը աշխարհ կը բաժնէր երկու ահռելի ճակատներու, Ֆրանսա եւ Դաշնակիցները, Գերմանիա եւ գերակիցները: Թուրքական պետութիւնը մաս կը կտայ մէր այս վերջինին: Հայերս մեր ազատութեան համար միշտ դաշնակից պետութեանց օժանդակութեան կը դիմէինք: Այս պարագան չէր վերաբերէր Գերմանական կայսրութեան աչքին, կը վախճար որ թրքական ուժերու պատերազմի ճակատը զբաղւած ըլլալու պարագային, հայեր կըլինան ներքին պատերազմութիւն մը յառաջնել եւ այդ ձեւով խանգարել պատերազմի յառաջնադաշտը:

Ուրեմս պէտք էր հայկական վտանգին առաջը, առնել զանոնք փնտցնելով: Ապրիլ 24ի մեծ սպանդը որոշուած էր միջազգային սեղանին շուրջ եւ գործարարութիւնը յանձնուած էր թրքական պետութեան:

Ինչպէս միւս բոլոր մեծ պետութիւնները ներքին վտանգի մը պարագային, իրենց գերիշխանութիւնը պահելու համար փորձաւորութիւնները կը զինեն եւ իրար դէմ կը լարեն, թուրքիան ալ հետեւեցաւ միեւնոյն քաղաքականութեան: Տեղահանեց մեզ, դէպի Արաբիոյ անապատներ, զինեց թուրք ու արաբ աշխարհները եւ իսկէս միլիոն ժողովուրդի բնաջնջման պատճառ եղաւ:

Արդարեւ թրքական պետութիւնը կազմակերպեց Ապրիլ 24ի սպանդը ոչ թէ ՀԱՅ անունը կրելու համար՝ այլ քաղաքական հաշիւ մը մարտնչելու համար: Նոյնը ըրաւ նաեւ մեր այսօրայն հայրենիքին Մեծն Լիբանանի ժողովուրդին հանդէպ, կախաղան քարծրացնելով քրիստոնեայ եւ միւսլիման լաւագոյն զաւակները 1916 Մայիս 6ին:

Ապրիլ 24ը պատեհազմի զոհաբեր մէկ օրակն է:

Այսօր, երբ այդ թուականէն 19ը տարիներ են անցնել եւ երբ մեր սիրելիներուն հետքն իսկ չէ մնացեր, մենք ամէն օր նոր Ապրիլ 24ը կանցնենք Սուրբայէն մինչեւ Ամերիկա, Յունաստանէն մինչեւ Հնդկաստան: Ապրիլ 24ը որոնք աւելի վտանգաւոր են քան 1915ը, որովհետեւ վերապրողներու զոյուածեան կապառնայ:

Մեր հայ կուսակցութիւնները (Թիւրքիայէն մեր արտաստեմով առնոյն յեղափոխական եւ քաղաքական ծրագիրներն ալ ըստը ինկան) կ'ընեն

խակապէս հայրենասէրներ են, տէնոր կազմակերպելու եւ այսօրուայ իւր Հայաստանի հանդէպ հակա-քրօնականութիւնը տեղ (որը նողկանք կը պատճառեն օտարներուն) լաւագոյնը ըրած պիտի ըլլային եթէ ձգէին իրենց «քաղաքական» ծրագիրները եւ ոյժ տային ներգաղթի գործին:

Արդեօ՞ք կուսակցական շէֆեր չեն գիշանիր պարզ օգնութեան գործին միայն կապուել:

Սակայն եղբայրասպան եւ ազգակործան այս ընթացքը մեզ չի վհակեցնէր, Ապրիլ 24ի առթիւ եւ իմ խօսքս կուղղեմ Դաշնակ, Հնչակ, Թաւադար շարքային ազգակիցներու, որոնց ցաւը միեւնոյնն են, որոնց անկեղծ հայրենասիրութեան մասին ոչ մէկ կասկած ունինք, դուրս գալով իրենց «երկաթեայ տիսիքի»-ի կապանքներէն՝ համարաշուշութիւն գոյացնելէն զոնք մէկ կէտի շուրջ օգնել Հայաստանի օրհնարութեան եւ աւագացնել ներգաղթի գործը:

Միայն այս ձեւով է որ մենք մեր ազգային դիմագիծը պիտի կրնանք պահել եւ միեւնոյն ժամանակ փրկել քաղաքագար հայ աշխատաւորները՝ որոնք անգործութենէ կը տառապին, տունն եւ ուտելու հաց չունին:

Միայն Արարատի փէշերուն տակ հաւաքուելով է որ մենք յարգած պիտի ըլլանք Ապրիլ 24ի նահատակներուն յիշատակը, դէմ դրած՝ նոր Ապրիլ 24 երու, թե՛ քաղաքական «քաղաքակիրթ» աշխարհի երեսին եւ լուծած պիտի ըլլանք մեր սիրելիներուն վրէժը:

Ա. Յ. Ա.

ՅԱՐԳԱՆՔ

24 Ապրիլ 1915ը սեւագոյն թուականներէն մին է հայոց պատմութեան՝ որ վերապրող սերունդին համար յիշատակի ու ներշնչումի մեծագոյն պատկերը կը հանդիսանայ:

Այս օր, այդ պահուէնին առջեւ, երկնադածութեամբ կուգամ զուգի խոնարհել ու իմ յարգանքի բաժինը բերել մէկ միլիոն զոհերուն:

Թարգա՛նք բոլոր անոնց՝ որոնք զոհեցան եղան արիւնարբու Թուրք զաւակներու անողորմ բարբարոսութեան:

Թարգա՛նք, բոլոր անոնց՝ որոնք տարագրութեան ճամբուն վրայ ինկան անօթի ու ծարաւ՝ անոյս ու անմուրազ:

Այսօր, 19 տարիներէ վերջ, քնազուրկ գաղութահայութիւն մ'ունինք, որոնք, եթէ տարին մէկ օր-24 Ապրիլին-ինքնամոխտելին ու վերջին տառապանքի այն զարհուրելի Գողգոթան՝ ուրիշ անցան եւ դեռ ծանր խաչն ուսին կը բարձրանան՝ բաւ պիտի ըլլար միջնաբերդի համարել, զի այդ ինքնամոխտման եւ վերջի-շումի պահերուն՝ մէն մի վերապրողի մտքին մէջ կը թաքնուէր սիրելիներու կարօտը եւ հուր տենեղեղ զայն կը մղեն դէպի զարթնում ու սթամբուլ:

Զարթնի՛ր հայ ժողովուրդ, զարթնի՛ր վերապրող հայութիւն եւ ճանչցի՛ր բոլոր անաւոր թշնամին բուն ներքին ոտնուր որ աւելի զարհուրելի է քան Թուրքը յարբարոս...
Ճանչցի՛ր զայն աւելի խոր համագ

ՄԵՐ ՈՐԴԻՆԱԿԱՆ
ՄԱՂԹԱՆԲԵՐԸ

ԿԸ
ՄԱՏՈՒՑԱՆԵՐ
ՄԵՐ ՍԻՐԵՑԵԱԼ
ՇՆՈՐ ՀԱՓԱՅԼ
ՀԱՅՐԻԿԻՆ
ԻՐ
50 ԱՄԵԱՅ
ԳԱՀԱՆԱՅՈՒԹԵԱՆ
ՅՈՒՅԵՆԱՆԻ ԱՌԹԻԻ
(1884-1934)



ԱՄԵՆԱԿԱՅԻ ԳԵՐԵՔԱՆԻ
ԱԼԵՏԻՍ-ՊԵՏՐՈՍ ԺԴ. ԱՐՓԻԱՐԵԱՆ
ՎԱՏԻԿԱՆ-ՊԵՏՐՈՍ ԱՐՔ. ՎԱՏԻԿԱՆ ՀԱՅՈՑ
ՅԱՆՆ. ԿԻՆԻԿՈՑ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՐԺՈՒՄ ԺԻՆԻՉ ԹԵԼԱՂՈՒԹԻՒՆՆԵՐ ԾԲԵՂ ԵՐԵԿՈՑԵՆ

Դրեց՝ Տօք. Ս. Ա. Պապիկեան

Զատիկ առթիւ մեր Հայկա գտնուած միջոցին պատեհութիւնը ունեցանք վայելելու հոգին գեղեցկացնող ու սիրտը ազնուացնող գեղեցիկ ու մարտը վայելք մը, յաջող ու շքեղ գեղարուեստական երեկոյթ մը, լաւագոյններէն էր իր տեսակին մէջ եւ թելադրիլ հանգամանքով: Եւ ահա այս իսկ պատճառաւ պարտ ու պատշաճ հաւանքինքն անոր մասին գրել մեր Պէյրութ վերադարձին, եւ այս առթիւ ընել կարգ մը մասնաւոր ու ընդհանուր շինիլ թելադրութիւններ:

Այս գեղարուեստական կամ աւելի շիտակը՝ երաժշտական երեկոյթը սարքուած էր վերջերս Հայկաի մէջ կազմակերպուած «Հայ Մշակութային Միութեան» կողմէ, որուն նպատակն է գեղարուեստական կամ երաժշտական երեկոյթներ սարքելով Սիւրիանայի հայ ու օտար բոլոր տարրերը քով քովի բերել եւ անոնց միջեւ բարեկամական անկեղծ ու սերտ յարաբերութիւններ ստեղծելով հանդերձ զարկ տալ հայ մշակոյթին:

Սոյն երաժշտական երեկոյթը տեղի ունեցաւ Ապրիլ 4ին, Զորքաբերդի զուռնիով ու տուր անոր արժանի դասը, որպէսզի զաւակն իր մօր դէմ չի ծառանայ, իրմբոտանայ ու գաղութահայութիւնը որդիական աւագ պարտականութեամբ կապուի Մալի Հայրենիքին:

Ահա այն ատեն քու սիրելիներու յիշատակը անոնց յոյսն ու մուրաք կ'իրականանայ ու դուն կատարած կ'ըլլաս քու մեծագոյն յարգանքը՝ 1915 Ապրիլ 24ի բիւրուր գործերուն: Թարգա՛նք մէկ միլիոն անմեղ զոհերու՝ անթառամ յիշատակին: Անէ՛ք Ոճրագործներուն:

Պէյրութ

Կ. Յ.

(Ճար. Բ. 62)

ԻՆՇԱԿԵՒՆԵՐՈՍ, ԿԵՂԱՄ ԱՄՈՆԲ...

Այս, տարի Ռամազանի վերջին օրերը Պէյրութի կեդրոն, աւաղուտքի բանտին մէջ գօգնու (սենեակ)ին մէջ 40 տեղացի խում եւ 8 հատ ալ հայեր կ'ըլլան:

Իսլամ բանտարկեալները՝ ըստ իրենց սովորութեան՝ օրական չորս անգամ նամազ (Աղօթք) կ'ընեն: Հայ բանտարկեալները դժգոհ այս եղելութենէն՝ կը յանձնարարէն որ իրենց ալ հանգիստը նկատի առնուի, բայց գոհացում չի տրուիր:

Հայ բանտարկեալները այս անգամ կը բողոքեն բանտի տնօրէնութեան, դարձեալ անհետեւանք կը մնայ այս դիմումը:

Հայ բանտարկեալները կը դիմեն հայկ. ստեղծագործ հնարամտութեան... Կ'ունենան լոյս ատրճանակներ, որոնցմով կ'ընեն կը զինուի, միւս կէսն ալ իրենց ոտնամանալին (երսակ)ներով անակնկալ եւ չ'սպասուած պահուէն, կը յարձակին 40 հոգիներուն վրայ... Կ'ուր կ'սկսի, ծայրերը կը քարծրանան, եւ որուն վրայ կը հասնին բանտապետը, հսկիչները, գիւնդները, երբ կը նային թէ՛ խնդիր մեծ է, իսկոյն թէ՛ չ'ընտել օգն. ուժեր կը խնդրուի, ոստիկանական ուժեր կը հասնին, իսլամ 40 բանտարկեալներ, սնն ատրճանակ ունեցող հայերու սարսափին տակ են, ոստիկանապետը անձնատուրութիւն կը պահանջէ, «ապստամբներ» իրենց պայմանները կը ներկայացնեն:

Ա. Պէտք է զիրենք առանձին սենեակ մը դնեն:

Բ. Զի պատժել գործուած այս «Եղափոխութիւն»ը հանած ըլլաւ նուն պատճառաւ:

Կ'ընդունուին առաջարկները, Հայ յերբ կը յանձնուին եւ երբ սեւ ատրճանակները ոստիկանապետին կուտան՝ ան յանկարծակի կուգայ, նախ կը քարկանայ, սակայն անմիջապէս անգուսպ խնդրեք մը անձնատուր կը պահայ՝ ինչպէս տին ջուռէլ երբ մէն՝ Որովհետեւ միայն այդ ժամանակ վերահասու կ'ըլլայ թէ՛ սեւ ատրճանակները՝ հացի միջուկէ պատաստուած եւ սեւ Երկուստ խմոր Երբ էին:

Եւ դառնալով 40 իսլամներուն՝ կ'յաւելու-40 հոգիներ, ամօթ ձեզի, որ այս տեսակ ատրճանակներով գիտուած 4 հայերուն չի կրցար դիմադրել:

Ու այժմ, մեր «Երեսօրացած հայ բանտարկեալներ» կապրին իրենց յատուկ հանգստաւէտ սենեակին մէջ: Ընդհանրող բարեկամ, հայերս փառք տանք Աւստրոնոյ որ հարուստ ենք «Երեսօրներով», որոնք կը վստահ ամենուրեք, զանազան տեսակներով եւ թիփերով:

Անոնց «Երեսօրացման պատճառ» ներուն հետեւելու, քննէ եւ պիտի տեսնեն թէ՛ մեր խմորէ ատրճանակ քաղողներէն շատ ետ կը մնան անոնք: Փորձէ եւ տես...

ԺԸ՝

Թ. Գ. «Լիբանան» ալքի առաջ ունենալով վերոյիշեալ դէպքը, զիս ալ այս սիւնակէս տեղափոխած է, գուցէ կարծելով որ դժգոհ եմ տեղեւ, բայց ես ուզեցի որ տեղս դարձեալ գրաւեմ, չ'ընդունեցին, ես ալ օրինակելով յիշեալ հնարամտութիւնը, իմ թուրքիէ ատրճանակ քաղելով՝ վախցուցի թէ՛ արդեւ եւ առաջ փառք զրաւեցի իմ նախկին տեղս:

ԿԵՆՏՐԱԼ ԿԱՆԱԿԱՆԵՐԸ ԿՈՒՆ
ԿԵՆՏՐԱԼ ԿԱՆԱԿԱՆԵՐԸ ԿՈՒՆ (Շատ, դ, էջ)

կրօմ մատակարարելու համար պիտի բանակցեմք ձեզի հետ, որովհետեւ այս առթիւ, տեսնուեցաւ որ անոնք ձեռնահատութիւն չունին»:

ՀԱՃԻՆ ԹԱՂԱ ՆՈՐ ԵԿԵՂԵՑԻՆ

Ձեռնարկուած է շատոնց իվեր ծոր, բնագրուած եկեղեցւոյ շինութեան, եկեղեցաշէն յանձնախումբի հսկողութեամբ: Ինչպէս յայտնի է մեր ընթերցողներուն՝ հողը տրամադրուած էր ձորի, Հաճրն թաղի նախկին հողատիրոջ Պ. Նախիկ Նաթիֆահի կողմէ:

ՆՈՐ ԱՏԱՆԱՆ ԱԼ ՊԻՏԻ ՇԻՆԷ

Եկեղեցի շինելու, դպրոցներ բանալու արհաւիրք (Թրատի հող) Նոր Ատանացիներն ալ շինութեան սկսելու համար պետական արտօնութեան կ'սպասեն:

«ԲԱՐԵԻ ՏԵՐ ՊԱՊԱ»

ԿԱՏԱԵՆԴՈՒԹԻՒՆԸ

Այս օր, Շարթի երեկոյ, Ազգ. Սահակեան վարժ.ի սրահին մէջ կը ներկայացուի «Բարեւ Տէր Պապա» խնդրից կատակախաղը, ի նպատակ վարժ.ի բացին:

Կր յանձնարարենք ներկա ուսու:

Թրակցան Կալոթապները

Այեֆանքէի մասին

«Ճիմիի իրիշէթ» պաշտօնաթերթը կը գրէ թէ՛ «Պրանսա լա գործ մը եւ արգարտութիւնը կատարած կըլլայ եթէ մեծ մասամբ Թուրք բնակչութիւն ունեցող այս հողամասը Թուրքիոյ տայ: Պրանսա, որ տարիներով Ալպա-Լօթէնի կարօտը ունեցած է, ըլլող ազգերէն անոնք լաւ կրնայ գնահատել այս Թուրքերը իրենց մայր երկրին արժանացնելու կարիքը»:

—Ախորժակը ունեցող կը բացուի:

Մակարան

Պէյուք

ԱՊՐԻԼ 28	1934
ԵՂԻՍԱՅԵԱՆ	Պ. Դ.
ԵՂԻՍԱՅԵԱՆ	996
ԱՆՂԻՍԱՅԵԱՆ	996
ՏՈՐԱՆ	75
ԹՈՐԱՆ	59
ՊԱՆԵ ՕԹՈՄԱՆ	135
ԻՍՏԱՆԻ ԼԻՐ 100	650
ՅՈՒՆԱՆԻ ԻՍՏԱՆԻ 100	70
ԱՆՂԻՍԱՅԵԱՆ ՈՍԿԻ	617
Պրանսական	490
ՕՍՏԱՆԻԱՆ	554
Արժաւք մէջիտ	22

ՀԵՏԱՔՐՔՐԱԿԱՆ

ՄՈՒԴՐ-ՄԱՆԳԱՂԸ ՊԵՐԼԻՆԻ ՄԵՋ

8 Ապրիլի թիվով Պերլինին Բա-րիդի «Ժուրնալ» թերթին կը հետա-գրուի թէ յառաջիկայ Մայիս 1ին 25 միլիոն գերմանացի պիտի կրեն մուրճ մանգաղը, իբրեւ խորհրդանշան աշ-խատանքի տոնին: Արդարեւ երրորդ Բայիի բորքականտի մարմինը պատ-րաստել տուած է այդ օրուան համար մետաղեայ նշանակ մը, որ 5 մարք-նոց դրամի մը մեծութիւնը ունի: Նշանակին վերի կողմը կայ Կէօթէի գլուխը, վարը՝ նացիներու արծիւը, որ իր ճանկերուն մէջ բռնած է կեռ խաչ մը, իսկ արծիւին երկու բաց թևերէն մէկուն վրայ զծագրուած է մուրճը, միւսին վրայ մանգաղը, ու-րուն սուր ծայրը ուղղուած է դէպի Կէօթէի գլուխը:

Այս կերպով Հիթլերականները իրարու կը կապեն մտաւոր աշխա-տանքը՝ յանձին Կէօթէի, բանտորու-թիւնը՝ մուրճով եւ զիւղացիութիւնը՝ մանգաղով խորհրդանշուած:

Ինչպէս յայտնի է, մուրճ-ման-գաղը իբրեւ խորհրդանշան ընդուն-ուած է խորհրդային Միութեան կող-մէ եւ դրուած իր դրօշակին վրայ: Հիթլերական Գերմանիան, աշխա-տանքի իբրեւ խորհրդանշան ընդու-նելով մուրճ-մանգաղը, կ'ուզէ ցոյց տալ նախ թէ այլեւս վախ չունի համայնապարական բորքականտէ, զոր խստիւ զսպած է եւ յետոյ՝ թէ նացի իրաւակարգը իր ըմբռնութիւնով շատ չի տարբերիր խորհրդային իրաւա-կարգէն:

Ահա թէ ինչպէս երբեք երկու ծայրերը իրարու կը դպնան...

ԶԱՏԿԻ ԳԻՇԵՐԸ... ՄՈՍԿՈՒԱՅԻ ՄԷՋ

Հակառակ տեղատարափ անձրեւ-ւին Մոսկուայի եկեղեցիները զատիկի գիշերը լեփ-լեցուն էին: Հատ երեւ-ւոյթին ժողովուրդին զանազան խա-ւերը ներկայ էին ժամերգութեան:

«Տէլի Թէլեկրաֆ» թղթակիցն ալ կը հետազոտէ թէ մեծ բազմութիւններ առաւօտէն սկսեալ լեցուն էին եկե-ղեցիները, հազարաւոր հաւատացեալ-ներ եկեղեցիներու մէջ վերադառնալ տեղ գտնել կեցած էին փողոցներու մէջ, անձրեւին տակ:

Դ Ի Մ Յ Ե Ք
ԱՐԱՅԱՄ Ս. ՔԷՔՆԵԱՆԻ
ԽՆԱՅՈՂՈՒԹԵԱՆ ՏՈՒՆ
Հոն պիտի գտնէք ամէն տեսակի նպարեղներ շատ աժան գիներով, ղիւրութիւններով
Պասաջ քաւովայի գծին վը-րայ, քիւ 92 գոց բացաւեղ ինաց օուկայի դիմաց:

Կը փնտռուի

Մարաշ— Զուգուր Օպացի փա-ւրգ Շիւքրիւլին տղան Յովհաննէսը: Մօր անունը Մարիամ, քոռը անունը Լուծֆիա եւ մէկ մօրաքոռը անունը Նուրիցա Հարմանտան:

Մանրամասնելու համար ըսենք: Ֆէրիտէ Վարդանեան, Մերայ ալիք թաղէն, կը փնտռէ Անէմիլ թաղէն որմնադիր Սարգիսին տղան, սանտ-րագործ Յովհաննէսը, որուն երկրորդ մօր անունը Եղիսարէթ՝ իսկ քոյրե-րուն մէկուն անունը Զարուհի է, Սէ-ֆէրիլ թաղէն:

Տեղեկութիւն ունեցողներէն կը խնդրուի որ հետեւեալ հասցէին գրեն:

Տէր եւ Տիկին Դիւքիւր Վարդա-նեան, Քառասուն Մանկանց եկեղեցի Նոր Մարաշ:

Պէյրուք, Լիբանան:

Կը խնդրենք նաեւ «Արեւ»-էն որ արտատպէ:

Բնիկ Կեսարացի Արմենակ Շալճ-եան իր եղբայրները Գէորգ եւ Ստե-փան Շալճեանները:

1920ին Տամասկոս գտնուած շրջա-նին Լօս-Անժէլօսէն վերջին նամակը ստացած էր:

Կը խնդրուի լուր ունեցողներէն հետեւեալ հասցէին տեղեկացնել:

Armenak Chaldjian
Cordonnier
Souk Mair Djergeos No. 50
Beyrouth

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

ԳՐԻԳՈՐ ԱՃԵՍԵԱՆ

ԿՕՇԿԱԿԱՐ

Սուգ էլ—Էրմէն Նօ. 5 Պէյրուք

Ճարտարագէտեր,

գործարանատէրեր

եւ մեխանիկներ

ԴԻՄԵՏԻՔ ՁՈՒԼԱՐԱՆ

Ս. ՍԱՊՊԱՂ

Ուր տեղ պիտի գտնէք գոր-ծածուած եւ նոր կոյուղի-ներու յատուկ կափա-րիներ-հալոյն:

Կը շինուին եւ կը նորոգուին զանազան տեսակ մէքիւններ, մօ-թօրներ, բրէններ եւ բոմբը: Փողոց էմեքսեմաւ, Մարմարոն Պէյրուք

Փոսթարկը 483

ՅՈՒՆԱԿԱՆ ԱԶԳ. ՆԱԽԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

BYRON LINE - GREEK LINE

ԵՐԹԵԻԿՈՒԹԻՒՆ “ԲԱՐԻՍ 2” ԵՒ “ԱՆՏՐՈՍ” ՇՈՂԵՆԱԿԵՐՈՎ

ՊԵՐՈՒԹ-ՄԱՐՍԵՅՆ

Շոգենաւեր	Պէյրուք	Մեկնում	Ուղեգիծ	Մարտէլ կը հասնի
Բաթրիս 2	7 Մայիս	7 Մայիս	Աղէքսանդրիա-Բիրթ	14 Մայիս
Անտրոս	21 Մայիս	21 Մայիս	Աղէքսանդրիա-Բիրթ	29 Մայիս

ՊԵՐՈՒԹ - ՆԻԻ-ԵՈՐԲ

Շոգենաւեր	Պէյրուքէն մեկնում	Բիրթ ժամանում	Շոգենաւեր	Բիրթ մեկնում	Նիւ-Եօրք ժամանում
Անտրոս	10 Ապրիլ	14 Ապրիլ	Պիրոն	16 Ապրիլ	30 Ապրիլ
Բաթրիս	28 Մայիս	1 Յունիս	Պիրոն	1 Յունիս	15 Յունիս
Բաթրիս	8 Յունիս	12 Յունիս	Պիրոն	12 Յունիս	26 Յունիս
Բաթրիս	20 Օգոստոս	24 Օգոստոս	Պիրոն	24 Օգոստ.	7 Սեպտ.
Բաթրիս	30 Սեպտ.	3 Հոկտեմբ.	Պիրոն	3 Հոկտ.	18 Հոկտ.
Բաթրիս	11 Նոյեմբեր	15 Նոյեմբեր	Պիրոն	15 Նոյեմ.	29 Նոյեմբեր

Մանրամասնութեանց համար դիմել ՀԻԹԻ ԵՂԲԱՐՑ Մարաթ փողոց - Նամակատուի թիւ 511 Պէյրուք

COMPAGNIE GENERALE TRANSATLANTIQUE

ԹՐԱՆՍԱԹԼԱՆԹԻԿ

ԾՈՎԱՅԻՆ ԸՆԴ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ա) ՄԻԱՑԵԱԼ-ՆԱՀԱՆԳՆԵՐ Հալլը-Նիւ Եօրք եւօրեայ արագ բորքատակման փոխադ-րուիւն, կաշեւոր մաւերով «Ի Տը Ֆրանս» «Բաք» «Ֆրանս», «Շամբլէ», «Լաբայէր»:

բ) ԳՈՒՊԼ-ՄԵՔՍԻԲ ամսական բորքատ-ակման սպասարկութիւն:

գ) Զամագան երբեք խաղաղութիւն վրայով Անվերսէն ու Հալլէն — Գրիսպալ Լիպէր-բա, Կուաթեմալ, Լօս անժէլօս, Սան Ֆրան-ցիսկո:

դ) Գաղապաղա (Մարոք): Թիւնի, Ալժէր Օրան, Պրաքա, Ֆիլիքսվէլ եւ Պօնը (Ալժէր Թիւնիքի):

ԶԱՆԱԿԱՆ ՄԱՐԱՄԱՍՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱՆ

Հասցէ.—

Պ. Ս. ԷՅՆԱՐԻՆ

Compagnie Génér. Transatlantique
Khan-Tabet—Beyrouth

LA VELOUTY DE DIXOR

ԼԱ ՎԵԼՈՒԹԻ ՏԸ ՏԻՔՍՈՐ



Այս գեղեցիկ քրէմը կը պահպանէ կուրծքը, բազուկները եւ երեսը: Արեւին եւ ձմռան վնասներուն դէմ եւ մարդուն գոյնի, մաքրութեան, խնդափայլ տեսք մը կուտայ:

Գոյները փոխած են ճերմակ, փողոս-կրագոյն, դեղնագոյն եւ ընկալան: Բոլոր դեղագործներուն բով կը ծախուի:

Միակ աւանդապահ

Մալիամի Եղբայրներ

Ֆօշ փողոց - ՊԵՐՈՒԹ

սակցութեան եւ իր գործերուն գորա-վիզ հանդիսացան, այս կերպով Դաշ-նակցութիւնը զլեց անցաւ Հնչակեա-նութիւնը որ շատ տկարացած էր կո-տորածներու եւ երկպառակութիւն-ներու երեսէն:

Այն ժամանակները Երիտասարդ Թուրքերը Բարիդի մէջ սկսած էին գործել Սուլթան Համիտին դէմ, ա-ստիք նկատի առնելով Դաշնակցու-թեան վայելած համբաւը 1908ին ա-յն Դաշնակցութեան հետեւեալ զաշինք մը կը բերէին եւ երկուստեք աշխատե-ցան Սուլթանին դէմ պայքարելու եւ զայն զանդակեց ընելու: Եւ երբ երի-տասարդ Թուրքերը ազատութիւն հռչակեցին 1908ին եւ կառավարու-թեան դէպք ձեռք առին, պաշտօնա-պէս մանչացան Տ. Յ. Դաշնակցու-թիւնը: Հայերը Օսմանեան երեսփո-խանական ժողովին ղրկեցին բազմա-թիւ երեսփոխաններ որոնք մէջ նշանա-ւոր հանդիսացան Վարդգէս եւ Զօհ-րապ, որոնք Դաշնակցութեան թեկ-նածուներն էին: Մահմադադութեան շրջանին հայերու լեզուի դասակարգէն ալ նշանաւոր հանդիսացան Հալաճ-եան էֆէնտի՝ նախարար հանձնաւոր ջինուլեանց, Ոսկան էֆէնտի՝ թղթա-տարութեան նախարար, որ օգտակար թարգմանութիւններ վարողը եւ իր-

րատունական էֆէնտի՝ նախարար ար-տաքին գործոց:

Երբոր համաշխարային պատե-րազմը ծագեցաւ եւ Թուրքիա անոր մասնակցեցաւ Գերմանիոյ կողքին, ներքին գործոց նախարար Թալէաթ պէյ, պատերազմական նախարար էն-վէր փաշա եւ ծովային նախարար -Ճէմալ փաշա իրենց միջեւ բաժնեցին Թուրքիոյ մէջ իրենց ազդեցութեան շրջանակները, Անատոլիոն, Շօա էն-վէրի ազդեցութեան շրջանակը, արա-բական վիլայէթները՝ Ճէմալին, Կ. Պօլիս եւ Ադրիանապօլիս ալ՝ Թալէաթ պէյին:

Այս երեքը իրարու հետ համա-ձայնեցան Թուրքիոյ բնակչութիւնը ճնշելու եւ թրքացնելու համար: Հայոց ղեկավարները դէմ կեցան այս ծրագրին ու ձեռնարկեցին զին-ւորական կազմակերպութեան իրենց ցեղակիցները վերելու համար, անոնք 15,000 կամաւոր հանցեցին որոնք էն-վէր փաշայի դէմ ելան անոր ծրա-գիւրները ծախողեցնելու համար, սա-կայն էնվէր փաշա անոնց դէմ յաղ-թական ելաւ եւ մէկ միլիոն հայեր ջարդել տուաւ եւ ժաջածները սաս-տիկ ծնդուեցին: Եւսեմ Եսեմ, սովը անոնց շարքերուն մէջ ահաբեկ արե-րնոր գործեց եւ անորմէ խլեց 600,000

գոհներ: Այսպէսով պատերազմի սկիզ-բը Թուրքիոյ մէջ գոյութիւն ունեցող երկու բնակչութեան միլիոն հայ բնակչու-թեան մէջ 750,000 հոգի, որոնք ցրուեցան զանազան երկիրներ:

Ի. ԹՈՒՆԻՍԻՆ, 28 Փետր. 1934

ԶԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴՈՒՄԸ ՊՈԼԵՏԻԿ-ՆԵՐԻՆ— ԶԱՅԵՐՈՒ ԳԱՂԹԸ ՍՈՒՐԻՍ ԵՒ ԼՐԻԱՆԱՆ

Համաշխարային պատերազմը վերջացաւ Դաշնակիցներու յաղթու-թեամբ Գերմանիոյ դէմ ու Ռուսիա եւ Թուրքիա կորսնցուցին զանազան հողամասեր: Հայերը այս նպատա-ւոր առիթէն օգտուելով Երեսնի հայկական հանրապետութեան անկա-խութիւնը հռչակեցին եւ այս նորա-հաստատ հանրապետութիւնը պաշ-տօն յանձնեց հայ անուանի գրագէտ Պ. Ահարոնեանին իրենց լիազօր ներ-կայացուցիւր մասնակցելու այն հա-մաժողովին որ հաշտութեան դաշինք պիտի կնքէր Դաշնակիցներու եւ Թուրքիոյ միջեւ:

Երեսնի երեսփոխանական Ժո-ղովը Դաշնակ կուսակցութեան պատ-կանող Պ. Քաջազնուէնի նորածին հայկական հանրապետութեան նախա-

գահ ընտրեց, իսկ հռչակաւոր վիպա-սան եւ այժմ Պէյրուքի հայ համարա-նի տնօրէն Պ. Շանթը ընտրեց երես-փոխանական ժողովի փոխնախագահ: Նոյնպէս հռչակաւոր հայ գիտնական եւ այժմ Պէյրուքի յիշեալ ճէմարանի փոխ տնօրէն Պ. Աղաբեկը ընտրեց Հ. Հանրապետութեան կրթական նա-խարար, աստիք բոլորն ալ Դաշնակ-ցութեան ականաւոր գործիչներէն են:

Պօլշեկի Ռուսիա յարմար դատեց օգտուել ներկայացած նպատաւոր առիթէն, կցելու համար Հայաստա-նի հանրապետութիւնը իր կալ-ուածներուն: Ան այս նպատակով գո-րաւոր բանակ մը ղրկեց Հայաստանի դէմ: Միեւնոյն ժամանակ Մուսթաֆա Քէմալ քանք Հայաստանի վրայ, բաղաբական ծրագրի մը գործադրու-թեան համար զայն առժամապէս գրա-ւելու պատրուակով: Այս կերպով հա-յերը գտնուեցան երկու մեծ բանակ-ներու մէջտեղ: Անոնք համաժողով մը գումարեցին իրենց այս տաղա-պալի կացութեան վրայ խորհրդակ-ցելու համար եւ նկատի առնելով ի-րենց ուժերուն անբաւականութիւնը, իրենց վրայ յարձակող եւ իրենց երկ-րին վրայ ալ ունեցող այս ուժերուն հանդէպ եւ միւս կողմէ նկատի ունե-նալով թուրքերուն եւ իրենց միջեւ տիրող մեծ թշնամութիւնը, որոշեցին

չի ղիմադրել, ալ իրենց երկիրը փո-խանակ թուրքերուն յանձնելու, յան-նել ուստ պօլշեկներուն: Այս նպա-տակով ուստ բանակի հրամանատա-րութեան մօտ ղրկեցին պատուիրա-կութիւն մը որ անոր յայտնեց կայա-ցած այս համաձայնութիւնը, պայմա-նաւ սակայն որ իրենց հանրապետու-թիւնը եւ անոր բաղաբական ներքին ինքնավարութիւնը պահպանուէր:

Պօլշեկները ընդունեցին այս առաջարկը, մտան Հայկական Հան-րապետութեան մէջ, զայն գրաւեցին եւ անոր կցումը յայտարարեցին իրենց կալուածներուն հետ. սակայն հաւա-տարիմ չի մնացին հայերուն տրուած խոստումներն, այլ ձեռք դրին երկրին հարստութեան վրայ եւ բանտի տա-ռապաններու ենթակցեցին բոլոր դաշնակ զլխաւորները, ինչպէս նաեւ ուրիշ բաղաբական անձնաւորութիւն-ները. եւ Երեսնի հանրապետութեան մէջ գտնուած բոլոր բարեւորական հաստատութիւնները եւ հարստու-թիւնները կողոպտեցին իրենց բանա-կին ի նպատակ, եւ երբ հանդարտու-թիւնը տիրեց եւ տեսան թէ այլեւս երկրին սանձը իրենց ձեռքն է, իրենց բանակը Ռուսիա վերադարձուցին:

(3)

(Տարուակիցի)